44 – 26 = 18



52 – 35 = 17

280 Նկարին համապատասխան՝ կազմիր հավասարություն:



54 - 16 = 38

ա)

բ)

գ)

դ)

281 Կատարիր հանում՝ օգտվելով պատկերված թվային ուղիղից:

ա) 24 – 16
37 – 18
65 – 27
84 – 36

բ) 92 – 23
55 – 37
66 – 26
77 – 38

43 – 15 = 28





282 Անվանիր այն բոլոր եռանկյունները, որոնց համար ԱԴ կողմն ընդհանուր է:

ա)



բ)



283 Գծիր և լրացրու ազատ վանդակները:

ա)

բ)

Օրինակ՝

$96 - 54 = 42$

$54 - 24 = 30$

$42 - 30 = 12$

284 Կատարիր գործողությունները Սոնայի առաջարկած եղանակով

$53 - 27$

$53 - 27 = 53 - 20 - 7 = 33 - 7 = 26$

20 7

ա) $86 - 28$
$74 - 37$
$82 - 41$
$91 - 55$

բ) $65 - 39$
$47 - 28$
$94 - 88$
$35 - 17$

285 Կատարիր գործողությունները՝ հետևելով Աննայի առաջարկած եղանակին:

$53 - 27$

$53 - 27 = 53 - 30 + 3 = 23 + 3 = 26$

ա) $44 - 18$
$82 - 69$
$73 - 27$
$65 - 18$

բ) $82 - 57$
$55 - 39$
$74 - 28$
$95 - 39$

286 Կատարիր գործողությունները:

ա) 55 → (+ 17) → □ → (– 17) → 55

գ) 25 → (+ 18) → □ → (– 18) → 25

բ) 77 → (– 14) → □ → (+ 14) → 77

դ) 79 → (+ 14) → □ → (– 14) → 79

287 Ընտրիր թվերի այնպիսի զույգեր, որոնց տարբերությունը 3 է:

34 26 97 17 14 23 37 40 94 100 20

288 Վերականգնիր հավասարությունը:

ա) 32 + □ = 52
26 + □ = 48
34 – □ = 22

բ) □ + 71 = 92
□ + 24 = 46
□ – 44 = 32

գ) 51 = 30 + □
72 = 32 + □
48 = 59 – □

289 Պատասխանիր Այգի ու Աննայի հարցերին:

Որքան դրամ կա յուրաքանչյուր տողում:

Որքան դրամ կա յուրաքանչյուր սյունակում:

ԵՐԿՆԻՇ ԹՎԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՆՈՒՄԸ ՍՅՈՒՆԱԿՈՎ

290 Փորձիր բացատրել, թե ինչպես է Այգը հաշվել արտահայտությունների արժեքները:

Երկնիշ թվերը գումարելիս միավորը գումարվում է միավորին, իսկ տասնավորը՝ տասնավորին:

$14 + 25 = 39$ $\quad 71 + 25 = 96$

$43 + 25 = 68$ $\quad 57 + 12 = 69$

$4 + 5 = 9$

$34 + 25 = 59$

$3 + 2 = 5$

291 Փորձիր բացատրել, թե ինչպես է Անին հաշվել արտահայտությունների արժեքները:

$4 - 3 = 1$

$74 - 23 = 51$

$7 - 2 = 5$

Երկնիշ թվերը հանելիս նվազելիի միավորից հանում ենք հանելիի միավորը, նվազելիի տասնավորից՝ հանելիի տասնավորը:

$89 - 25 = 64$ $\quad 74 - 32 = 42$

$48 - 25 = 23$ $\quad 57 - 12 = 45$

292 Այգն ու Անին գումարումը կատարել են սյունակով: Դու նույնպես փորձիր կատարել այդ եղանակով:

$74 + 23$

$$\begin{array}{r} 74 \\ +\ 23 \\ \hline 97 \end{array}$$

$74 - 23$

$$\begin{array}{r} 74 \\ -\ 23 \\ \hline 51 \end{array}$$

ա) $37 + 42$
$54 + 25$
$64 - 41$
$88 - 68$

բ) $77 + 12$
$33 + 24$
$46 - 33$
$78 - 48$

293 Փորձիր բացատրել, թե ինչպես է Այգը կատարել գումարում:

$7 + 5 = 12$

$37 + 25 = 62$

$3 + 2 = 5$

Եթե միավորների գումարն անցնում է մեկ տասնյակից, ապա տասնյակների թիվը ավելանում է մեկով:

$28 + 54 = 82$ $\quad 19 + 53 = 72$

$34 + 27 = 61$ $\quad 47 + 18 = 65$

294 Տես, թե ինչպես է Այգը կատարել գումարումը, և դու նույնպես կատարիր այդ եղանակով:

ա) $27 + 44$

$54 + 28$

$44 + 48$

$55 + 35$

բ) $67 + 14$

$43 + 28$

$77 + 18$

$36 + 27$

6 մ. + 7 մ. = 13 մ.

1 տ. 3 մ.

$56 + 27$

$$\begin{array}{r} {\scriptstyle 1} \\ 56 \\ +\,27 \\ \hline 83 \end{array}$$

$76 + 18$

$$\begin{array}{r} {\scriptstyle 1} \\ 76 \\ +\,18 \\ \hline 94 \end{array}$$

295 Ստուգիր հավասարությունը:



ա) ♥ $= 18 + 5$

♥ $= 26 + 6$

♥ $= 42 - 7$

բ) ♥ $= 42 - 19$

♥ $= 18 + 14$

♥ $= 23 + 12$

գ) ♥ $= 40 - 17$

♥ $= 15 + 17$

♥ $= 26 + 9$

296 Տասնյակներից մեկը ներկայացրու միավորների տեսքով:

Օրինակ՝

3տ. 6մ. = 2տ. 16մ.



ա) 5տ. 6մ.
4տ. 5մ.
3տ. 3մ.
9տ. 8մ.

բ) 7տ. 8մ.
9տ. 7մ.
4տ. 4մ.
8տ. 6մ.

297 Տես, թե ինչպես է Այգը կատարել հանումը, և դու նույնպես կատարիր այդ եղանակով:

7 տ. = 6 տ. 10 մ.

72 – 58

	տ.	մ.
	6	12
72	~~7~~	~~2~~
58	5	8
14	1	4

ա) 64 – 47
74 – 68
46 – 37
53 – 48

բ) 64 – 47
82 – 68
46 – 39
50 – 48

298 Արտագրիր՝ լրացնելով Սոնայի և Աննայի բաց թողած թվանշանները:





299 Խնդիրներ.

ա) *Ճանապարհորդը գնացքում եղել է 2 օր և 3 ժ: Քանի՞ ժամ է եղել նա գնացքում:*

բ) *Ճանապարհորդը գնացքում եղել է 32 ժ: Քանի՞ օր և քանի՞ ժամ է եղել նա գնացքում:*

300 Ձույգով փոխարինեք Այգին ու Անիին և բանավոր կատարեք գործողությունները:

Գումարում

0 → +12 → □ → +8 → □ → +24 → □ → +22 → □ → −66 → □

Հանում

100 → −4 → □ → −30 → □ → −22 → □ → −4 → □ → −40 → □

301 Կատարիր առաջադրանքները և ստուգիր Անիի կատարածի հետ:

ա) 33 + 58 բ) 56 + 34 գ) 74 − 58 դ) 97 − 58 ե) 52 − 9

1 + 33 58 91	1 + 56 34 90	6 14 − 7\4 58 16	8 17 − 9\7 58 39	4 12 − 5\2 9 43

302 Կատարիր գործողությունը:

ա) $\begin{array}{r} 44 \\ +\,46 \\ \hline \end{array}$ $\begin{array}{r} 37 \\ +\,58 \\ \hline \end{array}$ $\begin{array}{r} 87 \\ -\,39 \\ \hline \end{array}$ $\begin{array}{r} 42 \\ -\,36 \\ \hline \end{array}$ բ) $\begin{array}{r} 55 \\ +\,36 \\ \hline \end{array}$ $\begin{array}{r} 71 \\ +\,19 \\ \hline \end{array}$ $\begin{array}{r} 64 \\ -\,46 \\ \hline \end{array}$ $\begin{array}{r} 82 \\ -\,38 \\ \hline \end{array}$

303 Վերականգնիր հավասարությունը:

ա) 28 □ = 48	բ) 55 □ = 36	գ) 47 □ = 60
88 □ = 68	14 □ = 28	76 □ = 61
77 □ = 87	70 □ = 95	70 □ = 90

304 Համեմատիր. (>, <, =)

ա) $75 + 17 \bullet 75 + 18$ $77 - 25 \bullet 87 - 35$ $44 - 42 \bullet 54 - 42$

բ) $15 + 71 \bullet 23 + 72$ $47 - 33 \bullet 47 - 25$ $55 - 55 \bullet 55 - 33$

305 Խնդիրներ.

ա) *Այգը տնից մինչև դպրոց գնում է 25 րոպեում: Դպրոցում դասերն սկսվում են ժամը 9–ին: Դասից չուշանալու համար ամենաուշը ժամը քանիսի՞ն նա պետք է դուրս գա տնից:*

բ) *Այգը տնից մինչև դպրոց գնում է 25 րոպեում: Դպրոցում դասերն սկսվում են ժամը 9–ին: Կուշանա՞ արդյոք նա դասից, եթե տնից դուրս գա ժամը 8–ն անց 25–ին:*

306 Գտիր անհայտ նվազելին:

Օրինակ՝ $\square - 28 = 47$

$47 + 28 = 75$

Ստուգում

$$\begin{array}{r} {\scriptstyle 1\ \ \ } \\ 47 \\ +\ 28 \\ \hline 75 \end{array} \qquad \begin{array}{r} {\scriptstyle 6\ 15} \\ 7\not{5} \\ -\ 28 \\ \hline 47 \end{array}$$

ա) $\square - 23 = 45$ $\square - 47 = 35$ $\square - 27 = 33$

բ) $\square - 28 = 41$ $\square - 42 = 29$ $\square - 26 = 44$

307 Յուրաքանչյուր շրջանին համապատասխան՝ կազմիր հավասարություններ:



$36 + 17 = 53$

$17 + 36 = \square$

$53 - 17 = \square$

$53 - 36 = \square$

+, −

ա)

բ)

գ)

308 Լրացրու ազատ վանդակները և համեմատիր գագաթների թվերը:



309 Առաջադրանքներ.

ա) *Գծիր 5 սմ կողմով քառակուսի և հաշվիր նրա կողմերի երկարությունների գումարը:*

բ) *Գծիր 4 սմ և 5 սմ կողմերով ուղղանկյուն և հաշվիր նրա կողմերի երկարությունների գումարը:*

310 Խնդիրներ.

ա) *Քանի՞ մետր ճանապարհ պետք է անցնի շնիկը նապաստակի մոտ գնալու համար:*

բ) *Կենդանիներից ո՞րն է ծառից ավելի հեռու գտնվում և քանի՞ մետրով:*

գ) *Կենդանիներից ո՞րն է ծառին ավելի մոտ գտնվում և քանի՞ մետրով:*



311 Ասա յուրաքանչյուր ժամացույցի ցույց տված ժամը:

9:30

312 Հաշվիր բազմանկյան պարագիծը:





Պարագիծը բազմանկյան կողմերի երկարությունների գումարն է:

313 Հաշվիր քառանկյան պարագիծը, եթե նրա կողմերն են՝

ա) 23 սմ, 17 սմ, 14 սմ, 20 սմ,

բ) 5 դմ, 4 դմ, 3 դմ, 4 դմ:

314 Խնդիրներ.

ա) *Ուղղանկյունաձև հողամասի երկարությունը 25 մ է, իսկ լայնությունը՝ 18 մ: Ինչքա՞ն է այդ հողամասի ցանկապատի երկարությունը:*

բ) *Քառակուսաձև հողամասի երկարությունը 22 մ է: Ինչքա՞ն է այդ հողամասի ցանկապատի երկարությունը:*

315 Կատարիր գործողությունները:

ա)	բ)	գ)	դ)
32 + 38 + 5	34 + 36 + 6	25 + 53 + 7	27 + 56 + 4
48 – 14 – 7	57 – 22 – 3	18 + 34 + 6	18 + 35 + 5
15 + 78 – 7	25 + 37 – 4	37 + 26 – 6	33 + 29 – 9

316 Կռահիր օրինաչափությունը և ասա՛ ևս երեք թիվ:

ա) 7, 14, 21, ...

բ) 98, 90, 82, ...

գ) 6, 12, 18, ...

դ) 97, 90, 83, ...

317 Գտիր անհայտ գումարելին:

Օրինակ՝ $\square + 28 = 47$

ա) $\square + 23 = 47$
$\square + 47 = 75$
$\square + 27 = 37$

բ) $\square + 28 = 49$
$\square + 42 = 61$
$\square + 26 = 46$

$47 - 28 = 19$

Ստուգում

$$\begin{array}{r} {}^{3}\cancel{4}\,{}^{17}\cancel{7} \\ -\,2\,8 \\ \hline 1\,9 \end{array} \qquad \begin{array}{r} {}^{1}1\,9 \\ +\,2\,8 \\ \hline 4\,7 \end{array}$$

318 Խնդիրներ.

ա) *Առաջին տակառում կա 37 լ հյութ, իսկ երկրորդում՝ 12 լ-ով պակաս: Քանի՞ լիտր հյութ կա երկրորդ տակառում:*

բ) *Առաջին տակառում կա 37 լ հյութ, իսկ երկրորդում՝ 14 լ-ով ավելի: Քանի՞ լիտր հյութ կա երկրորդ տակառում:*

319 Կատարիր գործողությունը՝ ընտրելով հարմար եղանակ:

ա)	բ)	գ)	դ)
47 – 42	77 + 17	45 – 17	14 + 69
64 – 26	33 + 29	78 – 69	32 + 17
44 – 44	16 + 34	38 – 38	25 + 46
22 – 18	70 + 18	94 – 45	47 + 28

320 Խնդիրներ.

ա) *Որո՞նք են ձմեռվա ամիսները: Քանի՞ օր ունի ձմեռը:*

բ) *Որո՞նք են գարնան ամիսները: Քանի՞ օր ունի գարունը:*

321 Առաջադրանք՝ հիշողությունը մարզելու համար:

ա) 36 $\xrightarrow{-5}$ $\square$ $\xrightarrow{-5}$ $\square$ $\xrightarrow{-5}$ $\square$ $\xrightarrow{-5}$ $\square$ $\xrightarrow{-5}$ $\square$ $\xrightarrow{-5}$ $\square$ $\xrightarrow{-5}$ $\square$

բ) 55 $\xrightarrow{-7}$ $\square$ $\xrightarrow{-3}$ $\square$ $\xrightarrow{-7}$ $\square$ $\xrightarrow{-3}$ $\square$ $\xrightarrow{-7}$ $\square$ $\xrightarrow{-3}$ $\square$ $\xrightarrow{-7}$ $\square$

322 Ստուգիր և գնահատիր գիտելիքներդ:

Ինքնուրույն աշխատանք

1. 76 և 59 թվերից որն է մեծ:
2. Ո՞րն է 15 և 37 թվերի գումարը:
3. Ինչքա՞ն է 55 և 23 թվերի տարբերությունը:
4. Ինչքա՞ն է 81 – 23 արտահայտության արժեքը:
5. Գտիր 14 սմ, 12 սմ և 17 սմ կողմերով եռանկյան պարագիծը:
6. Նայիր պատկերված ժամացույցին և ասա՛, թե քանի րոպե հետո կլինի ժամը 8–ն անց 40 րոպե:

Առավելագույնը կարող ես վաստակել 14 միավոր.

1 + 2 + 2 + 3 + 3 + 3 = 14

Հարց	Պատաս-խան	Միավորը
1	76	1
2	52	2
3	32	2
4	58	3
5	43 սմ	3
6	25 րոպե	3

323 Վերականգնիր հավասարությունը:

ա) 37 կգ = ☐ կգ + 6 կգ

բ) 24 դմ = ☐ դմ + 4 դմ

ա) 23 լ = ☐ լ – 6 լ

բ) 15 սմ = ☐ սմ – 24 սմ

324 Թվերը գրիր երկու հավասար գումարելիների գումարի տեսքով:

ա) 4, 16, 28, 40

բ) 8, 14, 22, 30



325 Կարդա արտահայտությունները և ասա դրանց արժեքները:

$2+2+2$

$5+5+5$

$4+4$

$3+3+3+3$

Տես, թե Այգն ու Անին ինչ են առաջարկում գումարման փոխարեն:

$2+2+2=3\cdot 2$
երեք անգամ երկու



$2+2+2=3\cdot 2$
$5+5+5=3\cdot 5$
$4+4=2\cdot 4$
$3+3+3+3=4\cdot 3$

326 Հետևելով Այգի օրինակին՝ գումարը ներկայացրու արտադրյալի տեսքով:

Հավասար գումարելիների գումարը կարելի է ներկայացնել արտադրյալի տեսքով:

$3+3+3+3=4\cdot 3$
գումար արտադրյալ

ա) $3+3+3+3+3$
$7+7+7+7$
$8+8+8$

բ) $1+1+1+1+1+1+1$
$30+30+30$
$50+50$

327 Կարդա արտահայտությունը և ասա նրա արժեքը:

$5+5+5=15$
$3\cdot 5=15$
3 անգամ 5 հավասար է 15–ի:

$5+5+5+5$
$4\cdot 5$
4 անգամ 5 ...

$3+3+3+3$
$4\cdot 3$
4 անգամ 3 ...

328 Գտիր անհայտ բաղադրիչը.

ա) *գումարելին*

$42 + \square = 78$

$25 + \square = 34$

$42 + \square = 92$

բ) *հանելին*

$92 - \square = 77$

$63 - \square = 34$

$45 - \square = 8$

գ) *նվազելին*

$\square - 7 = 45$

$\square - 44 = 29$

$\square - 29 = 34$

329 Հետևելով օրինակին՝ արտադրյալը ներկայացրու գումարի տեսքով և հաշվիր արժեքը:

Չորս անգամ երեք հավասար է տասներկուսի:

$4 \cdot 3 = 3 + 3 + 3 + 3 = 12$

$4 \cdot 3 = 12$

արտադրիչ արտադրիչ արտադրյալ

ա) $3 \cdot 5$, $2 \cdot 8$, $5 \cdot 1$, $6 \cdot 0$

բ) $3 \cdot 8$, $2 \cdot 5$, $5 \cdot 2$, $7 \cdot 0$

330 Ըստ նկարների՝ կազմիր արտադրյալ և հաշվիր արժեքը:

$3 \cdot 10 = 10 + 10 + 10 = 30$

ա)

գ)

բ)



դ)

331 Արտադրյալի տեսքով ներկայացրու այն գումարները, որոնք հնարավոր են:

ա) $7 + 7 + 7 + 7 + 7 + 7$

$30 + 30 + 30 + 3$

$4 + 4 + 4 + 4 + 3$

բ) $8 + 8 + 8 + 8 + 8$

$25 + 25 + 25 + 25$

$9 + 9 + 9 + 4 + 4$

332 Տես, թե ինչպես է Այգը հաշվում արտադրյալը, և դու նույնպես հաշվիր այդ եղանակով:

Օրինակ՝

$4 \cdot 10 = 10 + 10 + 10 + 10 = 40$

$3 \cdot 25 = 25 + 25 + 25 = 75$

ա) $3 \cdot 20$ $4 \cdot 23$ $5 \cdot 15$ $6 \cdot 0$

բ) $3 \cdot 30$ $2 \cdot 42$ $4 \cdot 15$ $7 \cdot 0$

333 Համեմատիր. $>$, $<$, $=$

ա) $5 + 50 \bullet 10 + 55$ $23 + 21 \bullet 23 + 24$ $27 + 25 \bullet 49 - 0$

բ) $25 + 17 \bullet 35 + 27$ $47 + 44 \bullet 47 - 21$ $63 - 26 \bullet 15 + 22$

334 Հետևելով օրինակին՝ կազմիր արտադրյալ, մեկնաբանիր և ասա արժեքը:

$2 \cdot 4 = 8$

$4 \cdot 2 = 8$

ա)

բ)

գ)

դ)

335 Մեկնաբանիր Աննայի, Անիի և Այգի կատարած աշխատանքը:



336 Արտադրյալը հաշվիր Անիի նախընտրած եղանակով:

Օրինակ՝ $41 \cdot 2$

$41 \cdot 2 = 2 \cdot 41$

$2 \cdot 41 = 41 + 41 = 82$

ա) $8 \cdot 3$ $20 \cdot 4$ $14 \cdot 2$

բ) $9 \cdot 3$ $45 \cdot 2$ $24 \cdot 2$

337 Արտադրյալի տեսքով ներկայացրու այն գումարները, որոնք հնարավոր են:

ա) $5 + 5 + 5 + 5$ $20 + 20 + 20$ $3 + 3 + 3 + 5 + 5$

բ) $4 + 4 + 4 + 4 + 4$ $15 + 15 + 15$ $6 + 6 + 6 + 7$

338 Խնդիրը լուծելու համար կազմիր արտադրյալ և հաշվիր արժեքը:

ա) *Մայրիկը գնել է 3 տուփ ձու: Քանի՞ ձվի համար է նա վճարել, եթե յուրաքանչյուր տուփում կա 12 ձու:*

բ) *Հայրիկը գնել է 4 տուփ մատիտ: Հաշվիր, թե քանի՞ մատիտ է գնել հայրիկը, եթե յուրաքանչյուր տուփում կա 15 մատիտ:*

339 Աղյուսակը լրացնելու համար կազմիր հավասարություններ:

ա)

Գումարելի	21		40
Գումարելի	29	5	
Գումար		40	71

բ)

Նվազելի	99	87	
Հանելի	95		47
Տարբերություն		28	45

340 Կատարիր գործողությունները՝ օգտվելով պատկերված թվային ուղիղից:



ա) $1 \cdot 2$ $2 \cdot 2$ $3 \cdot 2$ $4 \cdot 2$ $6 \cdot 2$ $7 \cdot 2$



բ) $1 \cdot 3$ $2 \cdot 3$ $3 \cdot 3$ $4 \cdot 3$ $5 \cdot 3$ $7 \cdot 3$

341 Հետևելով օրինակին՝ արտադրյալը հաշվիր քեզ հարմար եղանակով:

ա) $2 \cdot 35$ $22 \cdot 3$ $14 \cdot 2$

բ) $4 \cdot 12$ $17 \cdot 2$ $24 \cdot 3$



342 Աստղանիշերը փոխարինիր թվանշաններով:

ա)

$+\begin{array}{r}46**\\\hline 98\end{array}$	$+\begin{array}{r}{\scriptstyle 1}\\27\\48\\\hline *5\end{array}$	$-\begin{array}{r}76**\\\hline 25\end{array}$

բ)

$+\begin{array}{r}36**\\\hline 57\end{array}$	$-\begin{array}{r}82**\\\hline 40\end{array}$

343 Փորձիր վերականգնել հավասարությունը:

ա) □ · 7 = 14
□ · 4 = 20
□ · 2 = 12

բ) □ · 20 = 60
□ · 12 = 24
□ · 25 = 50

Օրինակ՝ □ · 5 = 15

3 · 5 = 15

344 Աղյուսակը լրացնելու համար կազմիր հավասարություններ:

ա)

▲	■	▲ + ■	▲ − ■
55	38		
56	29		

բ)

▲	■	▲ · ■	■ · ▲
5	3		
4	5		

345 Պատասխանիր բանավոր:
Քանի՞ խորանարդ կա յուրաքանչյուր խմբում:



ԲԱԺԱՆՈՒՄ

346 Կարդա՛ հավասարությունները և օգտվելով նկարից՝ փորձիր բացատրել իմաստը:



$8 : 4 = 2$ 8–ը *բաժանած 4–ի հավասար է 2–ի*

$8 : 2 = 4$ 8–ը *բաժանած 2–ի հավասար է 4–ի*

$12 : 4 = 3$ 12–ը *բաժանած 4–ի հավասար է 3–ի*

$8 : 4 = 2$

բաժանելի — բաժանարար — քանորդ

347 Ըստ նկարի՝ կազմիր հավասարություն:



ա)

բ)

գ)

դ)

ե)

348 Օգտվելով նկարից՝ գտիր արտահայտության արժեքը:

Օրինակ՝

$12 : 3 = 4$
$12 : 4 = 3$

ա)

$10 : 2 =$ ☐
$10 : 5 =$ ☐

բ)

$6 : 2 =$ ☐
$6 : 3 =$ ☐

գ)

$8 : 4 =$ ☐
$8 : 2 =$ ☐

349 Հետևիր օրինակին և լուծիր խնդիրները:

Օրինակ՝

Արան ունի 20 դրամ, իսկ Անին՝ 3 անգամ շատ: Որքա՞ն դրամ ունի Անին:

$3 \cdot 20 = 20 + 20 + 20 = 60$

Պատ.՝ 60 դրամ:

ա) *Աննան ունի 15 մատիտ, իսկ Անին՝ 2 անգամ շատ: Քանի՞ մատիտ ունի Անին:*

բ) *Արան 12 տարեկան է: Հայրիկը 3 անգամ մեծ է Արայից: Քանի՞ տարեկան է հայրիկը:*

350 Ըստ նկարի՝ կազմիր հավասարություններ:

Օրինակ՝

$3 \cdot 2 = 6$

$6 : 2 = 3$

ա)

գ)



բ)

դ)

351 Պատկերը բաժանիր նշված քանակով վանդակների և արդյունքը գրիր հավասարության տեսքով:

ա) *երեքական*

բ) *չորսական*



գ) *երկուական*

երեքական

$15 : 3 = 5$

352 Կատարիր գործողությունը՝ օգտվելով թվային ուղիղից:

ա) $1 \cdot 5$ $15 : 5$
$3 \cdot 5$ $10 : 5$
$4 \cdot 5$ $20 : 5$
$5 \cdot 5$ $25 : 5$



բ) $1 \cdot 4$ $8 : 4$
$2 \cdot 4$ $12 : 4$
$3 \cdot 4$ $4 : 4$
$4 \cdot 4$ $20 : 4$

353 Կարո՞ղ ես կատարել Սոնայի առաջադրանքը:

Պետք է գտնել այս շախմատի դաշտի լայնությունն ու երկարությունը:



354 Վերականգնիր հավասարությունը:

ա) $8 = \square \cdot 4$ բ) $2 \cdot \square = 12$ գ) $5 = \square : 10$
$24 = \square \cdot 8$ $3 \cdot \square = 12$ $3 = \square : 10$
$40 = \square \cdot 20$ $4 \cdot \square = 12$ $2 = \square : 10$

355 Ինչ մետաղադրամներով կարելի է վճարել՝

ա) 60 *դրամ գումարը,* բ) 50 *դրամ գումարը:*

356 Լրացրու դատարկ վանդակները:

ա)



բ)

գ)



357 Յուրաքանչյուր խումբ բաժանիր նշված քանակով շրջաններ պարունակող մասերի և արդյունքը գրիր քանորդի տեսքով:

Երկուական

Հնգական

Չորսական



358 Օգտվելով նկարից՝ ասա՛, թե տրված թվերից որո՞նք են բաժանվում 3–ի:

9

18

16

14

21

359 Պարզիր, թե քանի՞ հատ 5 կարելի է հանել տրված թվից, և ի՞նչ կմնա արդյունքում:

ա) 15 գ) 25

բ) 18 դ) 22

Օրինակ՝ $23 - \underbrace{5 - 5 - 5 - 5}_{\text{4 հատ}} = 3$

360 Կատարիր գործողությունները:

ա) 55 → (+18) → □ → (−18) → 55

գ) 22 → (+35) → □ → (−35) → 22

բ) 77 → (−48) → □ → (+48) → 77

դ) 70 → (+42) → □ → (−42) → 70

361 Խնդիրներ.

ա) *Անիի տատիկն ունի 4 թոռնիկ, Սոնայի տատիկը՝ 3 անգամ ավելի: Քանի՞ թոռնիկ ունի Սոնայի տատիկը:*

բ) *Այգի տատիկն ունի 12 թոռնիկ, Անիի տատիկը՝ 4 անգամ քիչ: Քանի՞ թոռնիկ ունի Անիի տատիկը:*

362 Համեմատիր. >, <, =

ա) $2 \cdot 8 \bullet 8$ $5 \cdot 20 \bullet 20$

բ) $15 : 5 \bullet 15$ $20 : 10 \bullet 20$

գ) $2 \cdot 4 \bullet 3 \cdot 4$ $15 : 5 \bullet 15 : 3$

363 Ուշադիր նայիր, թե ինչ են արել Աննան, Անին ու Այգը, և փորձիր մեկնաբանել նրանց կատարած աշխատանքները:



364 Տրված թվերի համար գտիր մի քանի բազմապատիկ:

ա) 5, 7, 10

բ) 3, 4, 12

Օրինակ՝

$2 \cdot 5 = 10$
$3 \cdot 5 = 15$
$4 \cdot 5 = 20$

10, 15, 20 թվերը 5-ի բազմապատիկներ են:

365 Աղյուսակը լրացնելու համար կազմիր արտահայտություններ:

●	90	32	75	26
△	54	23	26	17
□	73			

□ = ● − △ + 37

Օրինակ՝

$90 - 54 + 37 = 73$

$$\begin{array}{r} {}^{10}\not{9}\not{0} \\ -\ 54 \\ \hline 36 \end{array} \qquad \begin{array}{r} {}^{1}36 \\ +\ 37 \\ \hline 73 \end{array}$$

366 Կատարիր բանավոր:

Առանց ամբողջ արտահայտությունների արժեքները, եթե գիտես, որ.

ա) $23 + 58 = 81$
$24 + 58$
$25 + 58$

բ) $23 + 58 = 81$
$23 + 59$
$23 + 60$

գ) $83 - 58 = 25$
$84 - 58$
$85 - 58$

367 Խնդիր.

Որքա՞ն դրամ պետք է վճարել ափսեի պարունակության համար:



368 Օգտվելով թվային ուղիղից՝ անվանիր տրված թվերի համար մի քանի բազմապատիկ:

ա) 3, 6, 5

բ) 7, 2, 10

Օրինակ՝



4–ի բազմապատիկներ են՝ 4, 8, 12, 16, ...



369 Կատարիր գործողությունը:

ա) $2 \cdot 8$, $8 \cdot 2$, $3 \cdot 20$

բ) $3 \cdot 7$, $7 \cdot 3$, $4 \cdot 25$

գ) $15 : 5$, $15 : 3$, $40 : 4$

դ) $40 : 10$, $16 : 8$, $16 : 2$

370 Գտիր անհայտ բաղադրիչը:

ա) $50 - \square = 8$, $52 - \square = 26$

բ) $33 + \square = 81$, $29 + \square = 78$

գ) $52 + \square = 80$, $22 - \square = 59$

371 Կարդա աղյուսակը և պատասխանիր Անիի հարցերին:

Ըստ օրերի՝ Այգը աղյուսակում գրանցել է վերջին շաբաթվա ընթացքում դպրոցի ճանապարհին ծախսած ժամանակը:

Երկուշաբթի	22 րոպե
Երեքշաբթի	27 րոպե
Չորեքշաբթի	33 րոպե
Հինգշաբթի	19 րոպե
Ուրբաթ	22 րոպե
Շաբաթ	27 րոպե

- Ո՞ր օրն է նա ծախսել ամենաշատ ժամանակը:
- Ո՞ր օրն է նա ծախսել ամենաքիչ ժամանակը:
- Ո՞ր օրերին է նա ծախսել հավասար ժամանակներ:

2-Ի ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ: ԲԱԺԱՆՈՒՄ 2-Ի

372 Գծի՛ր թվային ուղիղը և շարունակի՛ր լրացնել 2-ի բազմապատիկներով:



373 Այգը կազմել է 2-ի բազմապատկման, իսկ Անին՝ 2-ի բաժանման աղյուսակը: Մեկնաբանի՛ր, թե ինչպե՞ս են նրանք կազմել աղյուսակները, և դրանք սովորի՛ր անգիր:



374 Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

ա) $4 \cdot 2$, $1 \cdot 2$, $10 \cdot 2$, $3 \cdot 2$

բ) $7 \cdot 2$, $9 \cdot 2$, $2 \cdot 2$, $6 \cdot 2$

գ) $5 \cdot 2$, $2 \cdot 5$, $8 \cdot 2$, $2 \cdot 8$

դ) $4 : 2$, $8 : 2$, $18 : 2$, $16 : 2$

ե) $6 : 2$, $2 : 2$, $14 : 2$, $20 : 2$

375 Կատարիր գործողությունը:

$$\begin{array}{r} 67 \\ +\ 24 \\ \hline \end{array} \quad \begin{array}{r} 32 \\ +\ 39 \\ \hline \end{array} \quad \begin{array}{r} 28 \\ -\ 9 \\ \hline \end{array} \quad \begin{array}{r} 85 \\ +\ 20 \\ \hline \end{array} \quad \begin{array}{r} 37 \\ -\ 18 \\ \hline \end{array} \quad \begin{array}{r} 75 \\ -\ 7 \\ \hline \end{array}$$

376 Տես, թե ինչպես են Այգն ու Անին լուծել խնդիրը, և առաջադրված խնդիրները լուծիր երկու եղանակով:

Աշոտն ունի 2 խնձոր, իսկ Արան՝ 4 անգամ ավելի: Քանի՞ խնձոր ունի Արան:

$2 + 2 + 2 + 2 = 8$

$4 \cdot 2 = 8$

ա) *Արամը գնեց 2 տետր, իսկ Սոնան՝ 5 անգամ ավելի: Քանի՞ տետր գնեց Սոնան:*

բ) *Խմորեղեն պատրաստելու համար մայրիկը օգտագործեց 2 ձու, իսկ Աննան՝ 3 անգամ շատ: Քանի՞ ձու օգտագործեց Աննան:*

377 Վերականգնիր հավասարությունը: *Կարող ես օգտվել 2-ի բազմապատկման աղյուսակից:*

ա) $\square \cdot 2 = 2$ $\square \cdot 2 = 12$

բ) $\square \cdot 2 = 4$ $\square \cdot 2 = 20$

գ) $2 \cdot \square = 8$ $2 \cdot \square = 10$

դ) $2 \cdot \square = 6$ $2 \cdot \square = 16$

378 Վերականգնիր հավասարությունը: *Կարող ես օգտվել 2-ի բաժանման աղյուսակից:*

ա) $\square : 2 = 8$ $\square : 2 = 4$

բ) $\square : 2 = 6$ $\square : 2 = 9$

գ) $\square : 2 = 2$ $\square : 2 = 10$

դ) $\square : 2 = 1$ $\square : 2 = 20$

379 Հաշվիր արագ, եթե գիտես, որ.

ա) $25 \cdot 2 = 50$
$24 \cdot 2 =$
$26 \cdot 2 =$

բ) $30 \cdot 2 = 60$
$29 \cdot 2 =$
$31 \cdot 2 =$

գ) $40 \cdot 2 = 80$
$39 \cdot 2 =$
$41 \cdot 2 =$

380 Համեմատիր. $>, <, =$

ա) 87 սմ ● 88 սմ
57 սմ ● 54 սմ

բ) 20 սմ ● 2 դմ
54 սմ ● 5 դմ

գ) 4 դմ ● 4 սմ
6 դմ ● 66 սմ

381 Կարդա՛ աղյուսակը՝ ասելով նաև բաց թողած թվերը:
Կարող ես տետրում նաև լրացնել աղյուսակը:

·	1	2	3	4	5	6	7	8	9	10
2	2	4				12			18	

382 Վերականգնի՛ր հավասարությունը:

ա) 8 : ☐ = 4 բ) 6 : ☐ = 3 գ) 7 = 14 : ☐ դ) 8 = 16 : ☐

16 : ☐ = 8 20 : ☐ = 10 8 = ☐ : 2 6 = ☐ : 2

383 Արտագրի՛ր՝ աստղանիշերը փոխարինելով համապատասխան թվանշաններով:





384 Խնդիր.

Գտի՛ր պատկերված ուղղանկյան երկարությունը, եթե կարկինի բացվածքը 2 սմ է:

385 Խնդիրներ.

ա) *Տատիկը իր բոլոր թոռնիկների համար գուլպաներ գործեց: Յուրաքանչյուր գուլպայի վրա նա գրեց մեկ տառ: Քանի՞ թոռնիկ ունի տատիկը, եթե նա գրեց ընդամենը 16 տառ:*

բ) *Ակնոցներ պատրաստելու համար օգտագործվել է 14 կտոր ապակի: Քանի՞ ակնոց է պատրաստել վարպետը:*

386 Կռահի՛ր օրինաչափությունը և շարունակի՛ր՝ գրելով ևս 5 թիվ:

ա) 2, 4, 6, ... բ) 3, 6, 9, ... գ) 4, 8, 12, ...

387 Պարզիր, թե խմբերից որը կարելի է բաժանել երկուական շրջաններ պարունակող մասերի:



388 Պատկերված թվերից Աննան պետք է արտագրի 2–ի բաժանվ թվերը, իսկ Սոնան՝ չբաժանվողները: Շարունակիր նրանց աշխատանքը:





389 Յուրաքանչյուր շրջանին համապատասխան՝ կազմիր հավասարություններ:



ա)



բ)



390 Առանց հաշվելու կարո՞ղ ես ասել, թե խմբերում ճուտիկների թիվը զույգ է, թե կենտ:





391 Այգը չափել է մատիտների երկարությունը և գրել աղյուսակում: Ստուգիր այն և արտահայտիր միլիմետրերով:



Հիշիր

1 մ = 100 սմ
1 դմ = 10 սմ
1 սմ = 10 մմ

Մատիտ	Երկարությունը
Կապույտ	7 սմ 4 մմ
Դեղին	7 սմ 7 մմ
Կանաչ	8 սմ 4 մմ
Կարմիր	6 սմ 5 մմ

7 սմ 4 մմ = 74 մմ

392 Ուշադիր դիտիր, թե ինչ հերթականությամբ են Այգն ու Ան
կատարել գործողությունները: Դու ևս վարվիր նույն կերպ

Նախ պետք է կատարել բազմապատկումն ու բաժանումը:

*Բազմապատկումն ո
բաժանումը բարձր
գործողություններ ե*

ա) $24 + 5 \cdot 2$
$20 - 6 : 2$
$24 + 5 \cdot 2$
$20 - 6 : 2$

$20 \underset{2}{+} 6 \underset{1}{\cdot} 2 = 32$

1 $6 \cdot 2 = 12$
2 $20 + 12 = 32$

$30 \underset{2}{-} 16 \underset{1}{:} 2 =$

1 $16 : 2 = 8$
2 $30 - 8 = 22$

բ) $7 \cdot 2 - 6$
$8 \cdot 2 - 3$
$18 : 2 + 32$
$10 : 2 + 55$

393 Հետևելով Այգի ու Անիի խորհուրդներին՝ նշիր գործողությ
կատարման կարգը և հաշվիր արտահայտության արժեքը:

Գումարումն ու հանումը ցածր կարգի գործողություններ են:

*Նույն կարգի գործողություն-
ները պետք է կատարել
գրված հերթականությամբ:*

ա) $24 + 55 - 32$
$14 : 2 + 77$
$10 : 2 \cdot 3$

$20 \underset{1}{-} 16 \underset{2}{+} 15 = 19$

1 $20 - 16 = 4$
2 $4 + 15 = 19$

$20 \underset{1}{:} 2 \underset{2}{\cdot} 3 =$

1 $20 : 2 = 10$
2 $10 \cdot 3 = 30$

բ) $34 - 25 + 32$
$12 : 2 + 44$
$26 \cdot 2 : 4$

394 Խնդիրները լուծիր բանավոր:

- Ցերեկվա ժամը 1–ին սկսեց անձրև տեղալ և դադարեց միայն երեկոյան ժամը 8–ին: Քանի՞ ժամ անձրևեց:
- Երեկոյան ժամը 10–ին սկսեց անձրև տեղալ և դադարեց միայն կեսգիշերին, երբ արդեն ժամը 2–ն էր: Քանի՞ ժամ անձրևեց:

395 Նշիր գործողությունների կատարման հերթականությունը և հաշվիր արտահայտության արժեքը:

ա) $29 + 52 - 32$ $77 - 28 + 23$ $25 : 5 \cdot 10$

բ) $48 + 35 - 59$ $84 - 58 + 26$ $20 : 5 \cdot 10$

գ) $36 - 16 : 2$ $14 + 12 : 2$ $4 \cdot 15 + 37$

դ) $10 : 2 - 2$ $18 : 2 + 4$ $34 + 3 \cdot 22$

396 Աղյուսակը լրացնելու համար կազմիր արտահայտություններ և հաշվիր դրանց արժեքը:

▲	■	●	▲ + ■ − ●	▲ + ■ · ●	▲ + ■ : ●
68	8	2			72
36	6	2			
44	2	2			

Օրինակ՝

▲ + ■ : ● = 68 + 8 : 2

$68 + 8 : 2 = 72$

1) $8 : 2 = 4$

2) $68 + 4 = 72$

397 Խնդիրներ.

ա) *Մայրիկն իր պատրաստած հյութը լցրել է 2 լիտր տարողությամբ 8 բանկայի մեջ: Քանի՞ լիտր հյութ է պատրաստել նա:*

բ) *Մայրիկը 16 լիտր հյութը պետք է լցնի 2 լիտր տարողությամբ բանկաների մեջ: Քանի՞ բանկա է անհրաժեշտ նրան:*

398 Օգտվելով 2–ի բաժանման աղյուսակից՝ ասա՛, թե տրված թվերից որոնք են զույգ, և որոնք՝ կենտ:

ա) 1, 5, 6, 10, 18 բ) 2, 3, 4, 7, 15, 16, 20

399 Հետևելով օրինակին՝ կլորացրու՛ թվերը և դարձրո՛ւ՝

ա) սանտիմետր

34 մմ ≈
29 մմ ≈
45 մմ ≈

բ) դեցիմետր

37 սմ ≈
62 սմ ≈
75 սմ ≈

28 մմ ≈ 30 մմ = 3 սմ
23 սմ ≈ 20 սմ = 2 դմ

400 Ինչքա՞ն է ժամացույցների ցույց տված ժամերի տարբերությունը:

ա)

բ)

գ)

401 Ստուգի՛ր գիտելիքներդ և գնահատի՛ր:

Ինքնուրույն աշխատանք

Պատասխանի՛ր այս հարցերին:

1. Քանիսո՞վ է 18–ը մեծ 6–ից:
2. Քանի՞ անգամ է 18–ը մեծ 6–ից:
3. 5, 8, 15, 23 թվերից որո՞նք են 5–ի բազմապատիկ:
4. Ինչքա՞ն է $25 + 3 \cdot 7$ արտահայտության արժեքը:
5. Գտի՛ր 14 սմ կողմով քառակուսու պարագիծը:
6. 5, 8, 10, 11, 16 թվերից որո՞նք են զույգ թվեր:

Աղյուսակով ստուգի՛ր պատասխաններդ և հաշվի՛ր վաստակածդ միավորները:

Առավելագույնը կարող ես վաստակել 14 միավոր.
2 + 2 + 3 + 3 + 2 + 2 = 14

Հարց	Պատասխան	Միավորը
1	12–ով	2
2	3 անգամ	2
3	5, 15	3
4	46	3
5	56 սմ	2
6	8, 10, 16	2

402 Գծիր թվային ուղիղը և շարունակիր լրացնել 3-ի բազմապատիկներով:



403 Այգը կազմել է 3-ի բազմապատկման, իսկ Անին՝ 3-ի բաժանման աղյուսակը: Մեկնաբանիր, թե ինչպես են նրանք կազմել աղյուսակները, և սովորիր անգիր:



404 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա)	բ)	գ)	դ)	ե)
4 · 3	7 · 3	3 · 5	9 : 3	6 : 3
1 · 3	9 · 3	5 · 3	21 : 3	3 : 3
10 · 3	3 · 3	3 · 2	24 : 3	15 : 3
8 · 3	6 · 3	2 · 3	18 : 3	30 : 3

405 Աննայի և Սոնայի առաջարկած գծապատկերներին համապատասխան՝ կազմիր խնդիրներ և լուծիր:





406 Հույգով փոխարինեք Այգին ու Անիին:



407 Կարդա՛ աղյուսակը՝ ասելով նաև բաց թողած թվերը:
Կարող ես տետրում նաև լրացնել աղյուսակը:

·	1	2	3	4	5	6	7	8	9	10
2		4				12			18	
3		6				18				30

408 Վերականգնիր հավասարությունը:

ա) $24 = \square \cdot 3$
$20 = 2 \cdot \square$

գ) $24 = 3 \cdot \square$
$20 = \square \cdot 2$

բ) $7 = 21 : \square$
$9 = \square : 3$

դ) $5 = 15 : \square$
$6 = \square : 3$

Օրինակ՝
$21 = \square \cdot 3$
$9 = \square : 2$

$21 = 7 \cdot 3$
$9 = 18 : 2$

409 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա) $18 : 3 \cdot 2$
$18 : 2 \cdot 3$
$24 : 3 \cdot 3$

բ) $6 \cdot 3 : 2$
$6 \cdot 2 : 3$
$10 \cdot 2 : 2$

գ) $27 : 3 : 3$
$2 \cdot 2 \cdot 3$
$24 : 3 : 2$

410 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա) $8 \cdot 3 + 26$
$24 : 3 + 15$
$27 : 3 + 36$

բ) $24 - 10 : 2$
$21 - 21 : 3$
$35 - 15 : 3$

գ) $9 \cdot 3 - 18$
$27 : 3 + 33$
$20 : 2 - 10$

411 Առաջադրանքներ՝ 5 րոպե հանգստանալու համար.
Վերականգնիր հավասարությունները:



412 Առաջադրանքներ՝ անհայտ արտադրիչը գտնելու վերաբերյալ.

Անհայտ արտադրիչը գտնելու համար արտադրյալը բաժանում ենք հայտնի արտադրիչի վրա:

ա) □ · 2 = 16
□ · 3 = 21

գ) 2 · □ = 20
3 · □ = 15

բ) □ · 3 = 27
□ · 2 = 12

դ) 2 · □ = 10
3 · □ = 30

413 Գտիր անհայտ բաղադրիչը:

ա) $52 - \square = 36$
$45 + \square = 82$
$88 - \square = 88$

բ) $\square - 58 = 37$
$\square + 27 = 72$
$\square - 29 = 36$

գ) $18 = 37 - \square$
$66 = 22 + \square$
$24 = 16 + \square$

414 Ստուգիր՝ ճիշտ է արդյոք լրացված աղյուսակը, և պատասխանիր Այգի հարցերին:

Արտադրիչ	3	2	4	2	2	3
Արտադրիչ	6	8	10	15	25	12
Արտադրյալ	18	16	40	30	50	36

- Ինչքա՞ն է 3 և 6 թվերի արտադրյալը:
- Ինչքա՞ն է 16 և 2 թվերի քանորդը:
- Քանի՞ անգամ է 40–ը մեծ 10–ից:
- Քանի՞ անգամ է 15–ը փոքր 30–ից:

415 Գրիր՝ ա) *20–ից փոքր այն զույգ թվերը, որոնք բաժանվում են 3–ի:*

բ) *30–ից փոքր այն կենտ թվերը, որոնք բաժանվում են 3–ի:*

416 Հետևելով Անիի օրինակին՝ դու նույնպես գրիր պատկերված բոլոր հատվածների երկարությունները:



Օրինակ՝

$АВ = 14$ սմ, $ВГ = 28$ սմ
$АГ = 14$ սմ $+ 28$ սմ $= 42$ սմ

417 Գծի՛ր թվային ուղիղը և շարունակի՛ր լրացնել 4-ի բազմապատիկներով:

Այս թվերը 4-ի բազմապատիկներ են:



418 Այգը կազմել է 4-ի բազմապատկման, իսկ Անին՝ 4-ի բաժանման աղյուսակը: Բացատրի՛ր, թե ինչպես են նրանք կազմել աղյուսակները, և սովորի՛ր անգիր:

$4 = 1 \cdot 4$

$4 + 4 + 4 = 3 \cdot 4$

$1 \cdot 4 = 4$ — $4 : 4 = 1$

$3 \cdot 4 = 12$ — $12 : 4 = 3$



419 Հաշվի՛ր.

ա) $5 \cdot 4$, $1 \cdot 4$, $8 \cdot 4$, $10 \cdot 4$

բ) $7 \cdot 4$, $9 \cdot 4$, $2 \cdot 4$, $4 \cdot 4$

գ) $3 \cdot 4$, $4 \cdot 3$, $6 \cdot 4$, $4 \cdot 6$

դ) $8 : 4$, $16 : 4$, $24 : 4$, $36 : 4$

ե) $4 : 4$, $12 : 4$, $20 : 4$, $40 : 4$

420 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա) $8 \cdot 4 - 17$
$36 : 4 + 78$
$9 \cdot 4 + 19$
$28 : 4 + 36$

բ) $28 : 4 \cdot 3$
$16 : 2 : 4$
$4 \cdot 3 : 6$
$10 \cdot 2 : 4$

գ) $83 - 40 : 10$
$18 + 27 : 3$
$20 - 12 : 4$
$38 - 40 : 4$

421 Այգը կազմել է խնդիր, իսկ Անին լուծել է այն: Ըստ Անիի լուծման՝ կռահիր, թե ինչ խնդիր է կազմել Այգը:

$2 \cdot 5 = 10$

$5 + 10 = 15$

Պատ.՝ 15 մ:

422 Առաջադրանքներ՝ անհայտ բաղադրիչը գտնելու վերաբերյալ:

Այսպես գտնում ենք անհայտ բաժանելին:

$\square : 3 = 7$

$7 \cdot 3 = 21$

Ստուգում

$21 : 3 = 7$

Անհայտ բաժանելին գտնելու համար քանորդը բազմապատկում ենք բաժանարարով:

ա) $\square : 4 = 8$
$\square : 4 = 9$
$\square : 4 = 10$

բ) $\square : 3 = 8$
$\square : 2 = 21$
$\square : 4 = 6$

Իսկ այսպես գտնում ենք անհայտ բաժանարարը:

Անհայտ բաժանարարը գտնելու համար բաժանելին բաժանում ենք քանորդի վրա:

ա) $36 : \square = 4$
$12 : \square = 4$
$21 : \square = 3$

բ) $20 : \square = 4$
$21 : \square = 3$
$18 : \square = 2$

$32 : \square = 4$

$32 : 4 = 8$

Ստուգում

$8 \cdot 4 = 32$

423 Առաջադրանք՝ 5 րոպե հանգստանալու համար.
Ասա 4–ի բազմապատիկները:



424 Տես, թե ինչպես են Այգն ու Անին հաշվել 6 սմ կողմով քառակուսու պարագիծը: Ընտրիր հարմար եղանակ և հաշվիր 7 սմ կողմով քառակուսու պարագիծը:

$6 + 6 + 6 + 6 = 24$ (սմ)

6 սմ

$4 \cdot 6 = 24$ (սմ)

425 Կարդա աղյուսակը՝ ասելով նաև բաց թողած թվերը:
Կարող ես տետրում նաև լրացնել աղյուսակը:

·	1	2	3	4	5	6	7	8	9	10
2			6			12			18	
4	4	8				24				40

426 Կատարիր բանավոր: *Թվերը ներկայացրու երկու հավասար գումարելիների գումարի տեսքով:*

ա) 4, 10, 8, 20, 50 բ) 2, 12, 40, 66, 100

427 Գծիր թվային ուղիղը և այն լրացրու 5-ի բազմապատիկներով:



428 Այգը կազմել է 5-ի բազմապատկման, իսկ Անին՝ 5-ի բաժանման աղյուսակը: Մեկնաբանիր, թե ինչպես են նրանք կազմել աղյուսակները, և սովորիր անգիր:



429 Հաշվիր.

ա)	բ)	գ)	դ)	ե)
4 · 5	7 · 5	3 · 5	10 : 5	35 : 5
1 · 5	5 · 5	5 · 3	25 : 5	20 : 5
9 · 5	10 · 5	4 · 5	45 : 5	50 : 5
8 · 5	6 · 5	2 · 5	40 : 5	15 : 5

430 Յուրաքանչյուր շրջանին համապատասխան՝ կազմիր հավասարություններ:



ա)



բ)



431 Ասա 48 թվի տեղը և բնութագրիր այն:

ա) 12, 24, 47, 52, 88

բ) 98, 72, 65, 35, 32

432 Խնդիրներ.

ա) *Հայրիկը գնել է 4 ծաղրուկ, յուրաքանչյուրը՝ 5 կգ: Քանի՞ կիլոգրամ ծաղրուկ է գնել հայրիկը:*

բ) *Պապիկը տակառի մեջ լցրել է 7 դույլ ջուր: Դույլի տարողությունը 5 լ է: Քանի՞ լիտր ջուր է լցրել պապիկը տակառի մեջ:*

433 Գտիր հավասարության անհայտ բաղադրիչը.

ա) արտադրիչը

$3 \cdot \square = 21$

$\square \cdot 3 = 30$

$3 \cdot \square = 18$

$\square \cdot 2 = 18$

բ) բաժանելին

$\square : 3 = 8$

$\square : 3 = 9$

$\square : 3 = 10$

$\square : 2 = 8$

գ) բաժանարարը

$27 : \square = 9$

$18 : \square = 6$

$21 : \square = 7$

$20 : \square = 4$

434 Ո՞վ է ավելի արագ օգտվում ժամացույցից:



435 Կարդա՛ աղյուսակը՝ լրացնելով նաև բաց թողած թվերը:

·	1	2	3	4	5	6	7	8	9	10
4		8				24			36	
5		10				30				50

436 Համեմատի՛ր. $>$, $<$, $=$

ա) $16 : 2 \bullet 5$ $36 : 4 \bullet 18$

բ) $6 \cdot 2 \bullet 15$ $9 \cdot 5 \bullet 54$

գ) $16 : 2 \bullet 16 : 4$ $6 \cdot 5 \bullet 7 \cdot 5$

437 Գտի՛ր արտահայտության արժեքը:

ա) $8 \cdot 5 - 27$ $6 \cdot 4 + 73$ $6 \cdot 5 + 45$

բ) $28 : 4 - 2$ $35 : 5 + 21$ $16 : 2 + 56$

գ) $28 - 20 : 5$ $35 + 21 : 3$ $16 + 50 : 5$

դ) $2 \cdot 2 \cdot 5$ $3 : 3 \cdot 5$ $1 \cdot 5 : 5$

438 Խնդիրներ.

ա) *Քանի՞ ցատկ պետք է կատարի ագեվազը 24 մ հեռավորությունն անցնելու համար, եթե նրա մեկ ցատկի երկարությունը 3 մ է:*



բ) *Հաշվի՛ր, թե քանի կիլոգրամ է 6 ծանրաքար ունեցող ծանրաձողը, եթե ձողը կշռում է 7 կգ, իսկ յուրաքանչյուր ծանրաքարը՝ 5 կգ:*

ՓԱԿԱԳԾԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

439 Կարդա՛ արտահայտությունը:

ա) $72 + 18$ $\quad$ $18 + 12$ $\quad$ բ) $28 - 5$ $\quad$ $88 - 6$ $\quad$ գ) $2 \cdot 20$ $\quad$ $7 \cdot 10$ $\quad$ դ) $18 : 2$ $\quad$ $28 : 4$

440 Նշի՛ր գործողությունների կատարման հերթականությունը:

ա) $72 + 18 : 2$ $\quad$ $18 + 12 \cdot 2$ $\quad$ բ) $28 - 5 \cdot 5$ $\quad$ $88 - 6 : 3$ $\quad$ գ) $2 \cdot 20 + 10$ $\quad$ $7 \cdot 10 - 30$ $\quad$ դ) $36 : 4 + 45$ $\quad$ $40 : 5 - 4$

441 Ո՞վ է ավելի արագ մտածում:

Առաջին անոթում կա 9 լ կաթ, իսկ երկրորդում՝ 6 լ: Քանի՞ 3 լիտրանոց անոթ է անհրաժեշտ ամբողջ կաթը տեղավորելու համար:

Լուծում
Առաջին եղանակ

$6 : 3 = 2$

$9 : 3 = 3$

$2 + 3 = 5$

Պատ.՝ 5 անոթ:

Լուծում
Երկրորդ եղանակ

$6 + 9 = 15$

$15 : 3 = 5$

Պատ.՝ 5 անոթ:

Կարող ենք կազմել նաև այսպիսի արտահայտություն:

$(6 + 9) : 3$

6 և 9 թվերի գումարը բաժանած 3-ի

$(6 \overset{1}{+} 9) \overset{2}{:} 3 = 15 : 3 = 5$

442 Կարդա՛ արտահայտությունը և հաշվի՛ր արժեքը:

ա) $(7 + 18) : 5$ $(8 + 12) \cdot 5$ բ) $(7 + 18) - 5$ $(88 - 6) + 7$ գ) $36 - (27 + 3)$ $24 + (18 - 12)$ դ) $2 \cdot (20 + 10)$ $8 : (18 - 14)$

443 Հետևելով Սոնայի ու Անիի օրինակին՝ նշի՛ր գործողությունների կատարման հերթականությունը և հաշվի՛ր արտահայտության արժեքը:

Փակագծի առկայության դեպքում առաջինը պետք է կատարել փակագծում տրված գործողությունը:

$15 + 10 : 5 = 17$

1. $10 : 5 = 2$
2. $15 + 2 = 17$

$(15 + 10) : 5 = 5$

1. $15 + 10 = 25$
2. $25 : 5 = 5$

ա) $27 - 9 : 3$ $(27 - 9) : 3$ $(32 - 8) : 4$

բ) $5 + 5 \cdot 3$ $(5 + 5) \cdot 3$ $(12 + 8) \cdot 2$

գ) $8 \cdot 3 + 7$ $8 \cdot (3 + 7)$ $7 \cdot (5 + 5)$

դ) $24 : 4 + 2$ $24 : (4 + 2)$ $24 : (8 - 4)$

444 Նշի՛ր գործողությունների կատարման հերթականությունը և հաշվի՛ր արտահայտության արժեքը:

ա) $38 - 15 - 12$ $38 - (15 - 12)$ $43 + (22 - 16)$

բ) $45 - 12 + 28$ $45 - (12 + 28)$ $45 - (42 - 28)$

գ) $18 : (18 - 16)$ $89 - 9 \cdot 3$ $40 - 40 : 5$

445 Կատարի՛ր գործողությունները:

ա) 8 ·5 :5

գ) 7 ·4 :4

բ) 6 ·3 :3

դ) 9 ·1 :1

446 Կատարիր հաշվարկներ աղյուսակը լրացնելու համար և պատասխանիր Անիի հարցերին:

Ըստ օրերի՝ Այգը աղյուսակում գրանցել է վերջին շաբաթվա ընթացքում դպրոց գնալիս և դպրոցից վերադառնալիս ծախսած ժամանակը:

	Գնալիս	Գալիս	Միասին
Երկուշաբթի	24 րոպե	28 րոպե	
Երեքշաբթի	25 րոպե	32 րոպե	
Չորեքշաբթի	31 րոպե	29 րոպե	
Հինգշաբթի	24 րոպե	26 րոպե	
Ուրբաթ	32 րոպե	29 րոպե	
Շաբաթ	27 րոպե	33 րոպե	

- Ո՞ր օրն է նա ծախսել ամենաշատ ժամանակը:
- Ո՞ր օրն է նա ծախսել ամենաքիչ ժամանակը:
- Ո՞ր օրերին է նա ծախսել հավասար ժամանակ:

447 Գտիր անհայտ բաղադրիչը.

ա) արտադրիչը

$3 \cdot \square = 27$

$\square \cdot 5 = 35$

բ) բաժանելին

$\square : 4 = 8$

$\square : 3 = 12$

գ) բաժանարարը

$45 : \square = 5$

$40 : \square = 4$

448 Խնդիրներ.

ա) *Պապիկը իր քաղած խնձորները տեղավորել է 6 արկղի մեջ, յուրաքանչյուրում՝ 5 կգ: Քանի՞ կիլոգրամ խնձոր է քաղել պապիկը:*

բ) *Պապիկը քաղել է 20 կգ խնձոր և զամբյուղների մեջ տեղավորել 4-ական կիլոգրամ: Քանի՞ զամբյուղ է օգտագործել նա:*

449 Ինչ թվեր պետք է գրվեն ազատ վանդակներում:

ա) 

բ)

գ)

450 Նշիր գործողությունների կատարման հերթականությունը և հաշվիր արտահայտության արժեքը:

Օրինակ՝ $5 \cdot 3 + 12 : 4$

$5 \cdot {}^{1}3 + {}^{3}12 : {}^{2}4 = 18$

1 $5 \cdot 3 = 15$

2 $12 : 4 = 3$

3 $15 + 3 = 18$

ա) $2 \cdot 5 - 9 : 3$
$3 \cdot 4 + 9 \cdot 3$
$5 \cdot 4 + 9 \cdot 5$

բ) $5 \cdot 4 + 12 : 3$
$6 \cdot 2 + 18 : 3$
$8 \cdot 4 + 35 : 5$

451 Պարզիր ինքդ:

ա) *Այգն ունի շատ լավ հիշողություն, որովհետև նա ամեն առավոտ ուտում է 2 խնձոր: Քանի՞ խնձոր է նրան պետք մեկ շաբաթվա համար:*

բ) *Անին նույնպես գիտի առողջ ապրելու գաղտնիքները և ամեն օր՝ նախաճաշից կես ժամ առաջ, միրգ է ուտում: Միրգ ուտելուց քանի՞ րոպե հետո է նախաճաշում Անին:*

452 Աստղանիշերը փոխարինիր համապատասխան թվանշաններով:

ա)

	1	1	10
+	*6	+63	−7*3
	4*	**	*
	85	82	*4

բ)

1	1	10
+56	+**	−2**
**	73	*7
73		5

453 Վերականգնիր հավասարությունը:

ա) $8 \square 2 \square 2 = 18$ (·, +)
$5 \square 3 \square 5 = 20$
$2 \square 3 \square 6 = 36$

բ) $20 \square 4 \square 4 = 19$ (−, :)
$24 \square 4 \square 6 = 0$
$30 \square 3 \square 8 = 2$

գ) $16 \square 4 \square 4 = 16$ (·, :)
$18 \square 3 \square 5 = 30$
$4 \square 5 \square 2 = 10$

454 Ինչ թվով պետք է փոխարինես քառակուսին, որպեսզի արդյունքում ստանաս 1 ժամ:

ա) 40 ր + □ ր
52 ր + □ ր
36 ր + □ ր

բ) 14 ր + □ ր
15 ր + □ ր
56 ր + □ ր

1-Ի ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ: ԲԱԺԱՆՈՒՄ 1-Ի: 0-Ի ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ

455 Գծիր թվային ուղիղը և շարունակիր լրացնել 1-ի բազմապատիկներով:



456 Մեկնաբանիր, թե ինչպես են Այգն ու Անին կազմել 1-ի բազմապատկման և 1-ի բաժանման աղյուսակները: Սովորիր անգիր:



457 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա)	բ)	գ)	դ)	ե)
4 · 1	7 · 1	3 · 1	5 : 1	6 : 1
1 · 1	5 · 1	1 · 3	3 : 1	4 : 1
9 · 1	10 · 1	5 · 4	2 : 1	8 : 1
8 · 1	6 · 1	4 · 3	10 : 1	5 : 5

458 Անին և Աննան քեզ փորձելու համար կատարել են մեկական սխալ: Փորձիր գտնել այդ սխալները:

$\overset{1}{5}4 + 8 = 62$	$43 + 37 = 70$	$\overset{10}{7}7 - 19 = 58$
$\overset{10}{5}5 - 37 = 18$	$\overset{10}{6}0 - 34 = 16$	$\overset{1}{4}9 + 39 = 88$

459 Նշված թվերի համար գտիր՝

ա) տարբերությունը	բ) գումարը	գ) արտադրյալը	դ) քանորդը
48 և 32	34 և 44	3 և 4	35 և 5
58 և 29	80 և 12	8 և 3	20 և 2
62 և 6	64 և 26	6 և 5	45 և 5

460 Ասա՛ երկու զույգ թիվ, որոնք տրված թվերի բազմապատիկներ են

ա) 5 բ) 3 գ) 4

461 Տես, թե Այգն ու Անին ինչպես են 0–ի հետ գործողություններ կատարում:



462 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա)	բ)	գ)	դ)
$4 \cdot 0$	$7 \cdot 0$	$0 : 1$	$0 : 7$
$0 \cdot 7$	$0 \cdot 1$	$0 : 8$	$0 : 10$
$9 \cdot 0$	$10 \cdot 0$	$2 : 0$	$8 : 0$

463 Աղյուսակը լրացնելու համար կազմիր հավասարություններ:

♡ · ★ + ♡ = 5 · 2 + 5

♡	★	♡ + ★ · 20	♡ · ★ + ♡	20 : ♡ + ★
5	2		15	
1	3			
4	0			

Օրինակ՝

$5 \cdot 2 + 5 = 15$

464 Խնդիրներ.

ա) *Աննան որոշել է պատրաստել 3 բաժին գաթա: Սակայն նա ունի միայն 3 ձու, որը նախատեսված է մեկ բաժին գաթայի համար: Քանի՞ ձու պետք է գնի Աննան:*

բ) *Մեկ բաժին գաթա պատրաստելու համար անհրաժեշտ է 3 ձու: Աննան գնել է 2 տուփ ձու, յուրաքանչյուրում՝ 6 հատ: Քանի՞ բաժին գաթայի համար կբավարարի Աննայի գնած ձուն:*

465 Անվանիր այն կետերը, որոնք գտնվում են **ԱԵ** հատվածի վրա:



466 Կարդա՛ աղյուսակը՝ ասելով նաև բաց թողած թվերը: *Կարող ես նաև լրացնել աղյուսակը:*

·	0	1	2	3	4	5	6	7	8	9	10
0	0		0				0			0	
1	0		2				6				10
2			4				12				20

467 Պատասխանիր հարցին և շարունակիր Անիի ու Այգի միտքը:
Ո՞ր թվերը կարող են լինել կանաչ քարտերի վրա:

468 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա)	բ)	գ)
$2 \cdot 0 - 0 : 3$	$5 \cdot 4 + 0 : 3$	$1 \cdot 55 + 99 \cdot 0$
$5 \cdot 0 + 9 \cdot 5$	$6 \cdot 2 + 0 : 5$	$1 \cdot 87 + 44 \cdot 0$
$1 \cdot 7 + 0 \cdot 9$	$8 \cdot 0 + 1 \cdot 8$	$1 \cdot 65 + 54 \cdot 0$

469 Վերականգնիր հավասարությունը:

ա) $4 \square 4 \square 4 \square 4 = 32$
$3 \square 3 \square 3 \square 3 = 30$
$5 \square 5 \square 5 \square 5 = 35$
(·, +)

բ) $4 \square 4 \square 4 \square 4 = 2$
$3 \square 3 \square 3 \square 3 = 7$
$5 \square 5 \square 5 \square 5 = 20$
(:, +)

470 Կազմիր արտահայտություն և լուծիր խնդիրը:

ա) *Այգն ուներ 11 մատիտ, Անին՝ 13, իսկ Սոնան չուներ: Սակայն նրանք բոլոր մատիտները հավասարապես բաժանեցին երեքի միջև: Նրանցից յուրաքանչյուրը քանի՞ մատիտ ունեցավ:*

բ) *Արան քաղեց 7 կգ, իսկ Արամը՝ 11 կգ խնձոր: Պապիկն այն հավասարապես տեղավորեց 3 արկղում: Յուրաքանչյուր արկղում քանի՞ կիլոգրամ խնձոր եղավ:*

471 Ինչ թվեր պետք է գրվեն ազատ վանդակներում:



472 Գծիր թվային ուղիղը և շարունակիր լրացնել 6-ի բազմապատիկներով:



473 Այգն ու Անին կազմել են 6-ի բազմապատկման և 6-ի բաժանման աղյուսակները: Մեկնաբանիր, թե ինչպես են նրանք կազմել աղյուսակները և սովորիր անգիր:



474 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա)	բ)	գ)	դ)	ե)
4 · 6	7 · 6	3 · 6	12 : 6	36 : 6
1 · 6	5 · 6	6 · 3	24 : 6	30 : 6
9 · 6	10 · 6	4 · 5	48 : 6	60 : 6
8 · 6	6 · 6	5 · 5	42 : 6	54 : 6

475 Նշիր գործողությունների կատարման հերթականությունը և հաշվիր արտահայտության արժեքը:

ա) $77 - 9 \cdot 6$
$40 - 40 : 5$
$(8 - 5) \cdot 12$
$4 \cdot (22 - 16)$

բ) $45 - 2 \cdot 20$
$67 - 12 : 4$
$45 : 5 - 9$
$72 - (44 + 28)$

գ) $45 : (54 - 49)$
$(38 - 36) \cdot 23$
$48 : (35 - 29)$
$(71 - 68) \cdot 20$

Օրինակ՝
$2 \cdot (43 - 28)$

$2^{2} \cdot (43 - {}^{1}28) = 30$

$^{1}43$
$-\ 28$
15

$^{2}\ 2 \cdot 15 = 15 + 15 = 30$

476 Աշխատանք կարկինով և քանոնով:

Այգի կառուցած բոլոր կետերը Ա կետից գտնվում են 2 սմ հեռավորության վրա:

Դու նույն եղանակով կառուցիր որևէ Բ կետ և նշիր դրանից 3 սմ հեռավորության վրա գտնվող 5 կետ:

477 Գտիր անհայտ բաղադրիչը.

ա) արտադրիչը
$6 \cdot \square = 24$
$\square \cdot 6 = 30$
$3 \cdot \square = 18$
$\square \cdot 7 = 42$

բ) բաժանելին
$\square : 6 = 8$
$\square : 5 = 9$
$\square : 4 = 10$
$\square : 1 = 8$

գ) բաժանարարը
$28 : \square = 7$
$36 : \square = 6$
$54 : \square = 9$
$45 : \square = 9$

478 Վերականգնիր հավասարությունը:

ա) $24 = \square \cdot 6$
$42 = 7 \cdot \square$

բ) $60 = 6 \cdot \square$
$40 = \square \cdot 10$

գ) $7 = 42 : \square$
$9 = \square : 6$

դ) $5 = 30 : \square$
$6 = \square : 6$

479 Ո՞ր թվերը կարող են լինել քառակուսու փոխարեն:

ա) $55 + \square < 60$
$42 + \square < 50$
$75 + \square < 81$

բ) $84 - \square > 80$
$24 - \square > 20$
$55 - \square > 48$

$55 + \square < 60$

0, 1, 2, 3, 4

480 Կարդա՛ աղյուսակը՝ ասելով նաև բաց թողած թվերը:
Կարող ես նաև լրացնել աղյուսակը:

·	0	1	2	3	4	5	6	7	8	9	10
0	0		0				0			0	
3	0		6				18				30
6			12				36				60

481 Խնդիր.

Վաճառողուհին որոշեց գազարները կապել 3-ական: Քանի՞ գազար ուներ նա, եթե կապեց 5 կապ:

482 Տես, թե Անին ինչպես է հաշվել կարմիր կողմերով ուղղանկյան երկարությունը: Դու էլ հաշվի՛ մյուս երկու ուղղանկյունների երկարությունները:

58մ − 43մ = 15մ

483 Նշիր գործողությունների կատարման կարգը և հաշվիր արտահայտության արժեքը:

ա) $7 \cdot 6 - 6 \cdot 6$
$5 \cdot 5 - 9 : 3$
$4 \cdot 0 + 5 : 5$

բ) $45 + 2 \cdot 30$
$88 - 35 : 5$
$50 : 5 + 90$

գ) $4 \cdot (57 - 28)$
$36 : (72 - 66)$
$48 : (45 - 39)$

484 Վերականգնիր հավասարությունը:

ա) $24 = \square \cdot 6$ $36 = 6 \cdot \square$

բ) $30 = 6 \cdot \square$ $30 = \square \cdot 6$

գ) $9 = 54 : \square$ $7 = \square : 6$

դ) $5 = 5 : \square$ $1 = \square : 4$

485 Ըստ տրված գծապատկերի՝ կազմիր խնդիր և լուծիր:



$\square \cdot \square = \square$ մ
$\square + \square = \square$ մ

486 Կատարիր գործողությունները:

ա) 5 ժ 20 ր + 7 ժ 25 ր
2 ժ 25 ր + 3 ժ 35 ր
4 ժ 24 ր − 3 ժ 12 ր

բ) 5 ժ 30 ր + 7 ժ 30 ր
2 ժ 45 ր − 1 ժ 20 ր
8 ժ 40 ր − 3 ժ 30 ր

487 Սոնան, Այգն ու Անին տրված թվերը պետք է արտագրեն ըստ պահանջի: Օգնիր նրանց:

4, 6, 8, 9, 12, 16, 18, 24, 30, 36, 40

Բազմապատիկ են 4–ին.

4, 8,

Բազմապատիկ են 6–ին.

6, 12,

Բազմապատիկ են 4–ին և 6–ին.

12,

7-Ի ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ: ԲԱԺԱՆՈՒՄ 7-Ի

488 Գծիր թվային ուղիղը և շարունակիր լրացնել 7-ի բազմապատիկներով:



489 Մեկնաբանիր, թե ինչպես են Այգն ու Անին կազմել 7-ի բազմապատկման և 7-ի բաժանման աղյուսակները: Դրանք սովորիր անգիր:



490 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա)	բ)	գ)	դ)	ե)
4 · 7	7 · 7	5 · 7	14 : 7	56 : 7
6 · 7	3 · 7	7 · 5	28 : 7	35 : 7
9 · 7	2 · 7	6 · 6	49 : 7	63 : 7
5 · 7	10 · 7	4 · 1	70 : 7	14 : 7

491 Հետևելով օրինակին՝ դու նույնպես գրիր պատկերված բոլոր հատվածների երկարությունները:

Օրինակ՝





$АВ = 18$ սմ, $ВГ = 37$ սմ, $ГД = 14$ սմ

$АГ = 18$ սմ $+ 37$ սմ $= 55$ սմ

$АД = 18$ սմ $+ 37$ սմ $+ 14$ սմ $= 69$ սմ

$ВД = 37$ սմ $+ 14$ սմ $= 51$ սմ

492 Բանավոր.

- *Ասա 5 թիվ, որոնց համար 2–ը բաժանարար է:*
- *Ասա 5 թիվ, որոնք բազմապատիկ են 2–ին:*
- *Ասա 5 զույգ թիվ:*
- *Ասա 5 կենտ թիվ:*

493 Կարդա՛ աղյուսակը՝ ասելով նաև բաց թողած թվերը: Կարող ես նաև լրացնել աղյուսակը:

·	0	1	2	3	4	5	6	7	8	9	10
5	0		10				30			45	
6	0		12			30	36				60
7			14					49			70

494 Վերականգնի՛ր հավասարությունը:

ա) $42 = \square \cdot 6$ $\quad$ $42 = 7 \cdot \square$

բ) $70 = 7 \cdot \square$ $\quad$ $70 = \square \cdot 10$

գ) $6 = 42 : \square$ $\quad$ $8 = \square : 6$

դ) $6 = 30 : \square$ $\quad$ $7 = \square : 6$

495 Գտիր անհայտ բաղադրիչը.

ա) արտադրիչը

$7 \cdot \square = 28$

$\square \cdot 6 = 42$

$3 \cdot \square = 21$

$\square \cdot 7 = 42$

բ) բաժանելին

$\square : 7 = 8$

$\square : 5 = 7$

$\square : 4 = 5$

$\square : 1 = 7$

գ) բաժանարարը

$28 : \square = 7$

$35 : \square = 6$

$63 : \square = 9$

$42 : \square = 7$

496 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա) $93 - 40 - 49$

$34 + 48 - 24$

$27 - (44 - 43)$

բ) $49 : 7 \cdot 5$

$28 : 4 : 7$

$12 : 2 \cdot 6$

գ) $9 \cdot 7 - 63$

$8 \cdot 7 - 45$

$7 \cdot (75 - 68)$

դ) $35 - 35 : 7$

$48 - 18 : 2$

$(50 + 10) : 6$

497 Ինչ թվեր պետք է գրվեն ազատ վանդակներում:



ա) բ) գ)

498 Առաջադրանք հիշողությունը մարզելու համար:



499 Վերականգնիր հավասարությունը:

ա) $8 \square 2 \square 3 = 12$

$18 \square 3 \square 5 = 30$

$8 \square 3 \square 6 = 4$

բ) $16 \square 4 \square 4 = 8$

$18 \square 6 \square 2 = 21$

$29 \square 8 \square 8 = 30$

գ) $16 \square 4 \square 4 = 0$

$18 \square 6 \square 2 = 6$

$17 \square 8 \square 3 = 27$

500 Գծի՛ր թվային ուղիղը և շարունակի՛ր լրացնել 8-ի բազմապատիկներով:



501 Մեկնաբանի՛ր, թե ինչպես են Այգն ու Անին կազմել 8-ի բազմապատկման և 8-ի բաժանման աղյուսակները: Դրանք սովորի՛ր անգիր:



502 Հաշվի՛ր արտահայտության արժեքը:

ա)	բ)	գ)	դ)	ե)
7 · 8	8 · 8	5 · 8	16 : 8	8 : 8
6 · 8	4 · 8	8 · 5	24 : 8	32 : 8
9 · 8	3 · 8	6 · 6	40 : 8	64 : 8
1 · 8	10 · 8	7 · 7	48 : 8	56 : 8

503 Հաշվիր արտահայտության արժեքը:

ա) $24 - (40 - 40)$, $22 + (40 - 24)$, $44 - (44 - 44)$

բ) $56 : 7 \cdot 3$, $24 : 4 : 2$, $12 : 2 : 2$

գ) $9 \cdot 8 - 8$, $4 \cdot 7 - 4$, $8 \cdot 8 - 64$

դ) $98 - 8 : 8$, $47 - 4 \cdot 7$, $48 + 6 \cdot 4$

504 Հետևելով օրինակին՝ յուրաքանչյուր շրջանի համար կազմիր հավասարություններ և լրացրու:



ա)



բ)



505 Փորձիր կռահել:

Այն որ թվերն են, որ բազմապատիկ են և 4-ին, և 8-ին:

506 Կարդա՛ բազմապատկման աղյուսակը՝ ասելով նաև բաց թողած թվերը:

·	0	1	2	3	4	5	6	7	8	9	10
2	0		4				12			18	
4	0		8				24				40
8			16					56			80

507 Գտիր անհայտ բաղադրիչը.

ա) արտադրիչը

$8 \cdot \square = 24$

$\square \cdot 8 = 32$

